

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Ք Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հաշվի առնելով երկու երկրների շահագրգռվածությունը՝ խորացնել իրենց բարեկամական հարաբերությունները,

ցանկանալով դյուրացնել Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության՝ դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող քաղաքացիների այցելությունները միմյանց երկրներ,

համաձայնեցին հետևյալի մասին:

## Հոդված 1

1. Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործված հետևյալ հասկացությունները նշանակում են.

«Դիվանագիտական անձնագրեր» - Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագրեր և Սիրիայի Արաբական Հանրապետության դիվանագիտական անձնագրեր,

«Պաշտոնական անձնագրեր» - Հայաստանի Հանրապետության ծառայողական անձնագրեր և հատուկ անձնագրեր և Սիրիայի Արաբական Հանրապետության ծառայողական անձնագրեր և հատուկ անձնագրեր:

2. Մի Պայմանավորվող կողմի քաղաքացուն, որն ունի դիվանագիտական կամ պաշտոնական վավեր անձնագիր, թույլատրվում է համապատասխան միջազգային կետերով մուտք գործել, դուրս գալ և տեղաշարժվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքով՝ առանց մուտքի արտոնագրի:

3. Մի Պայմանավորվող կողմի քաղաքացուն, որն ունի վերոնշյալ անձնագիրը, թույլատրվում է գտնվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում առավելագույնը 90 (իննսուն) օր ժամկետով՝ պաշտոնական առաքելությամբ: Այս ժամկետը կարող է երկարացվել յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համապատասխան մարմինների կողմից՝ վերոնշյալ ժամկետով:

## Հոդված 2

1. Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացուց, որը հանդիսանում է դիվանագիտական կամ հյուպատոսական անձնակազմի անդամ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում և ունի դիվանագիտական կամ պաշտոնական

վավեր անձնագիր, չի պահանջվում ձեռք բերել մուտքի արտոնագիր մյուս Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելու համար, և նրան այնտեղ գտնվելու ընթացքում տրվում է կացության բացառիկ կարգավիճակ:

2. Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացին, որը հանդիսանում է իր պետության ներկայացուցիչը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում տեղակայված միջազգային կազմակերպությունում և ունի դիվանագիտական կամ պաշտոնական անձնագիր, օգտվում է սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավունքներից:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված իրավունքներից օգտվում են նաև դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչության անդամի ամուսինը և նրանց խնամքի տակ գտնվող երեխաները՝ պայմանով, որ վերջիններս ունեն դիվանագիտական կամ պաշտոնական անձնագիր, կամ երեխաների անունները նշված են իրենց հոր կամ մոր անձնագրերում:

### Հոդված 3

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրին իրավունք է վերապահված մերժելու մուտքը իր երկրի տարածք կամ կրճատելու կացության ժամկետը մյուս Պայմանավորվող կողմի այն քաղաքացու, ում նրանք համարում են անցանկալի անձ:

2. Եթե Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացին կորցնում է իր անձնագիրը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, նա պետք է այդ մասին տեղյակ պահի հյուրընկալ երկրի պատասխանատու մարմիններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Համապատասխան դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն իր քաղաքացուն պետք է տրամադրի նոր անձնագիր կամ ճանապարհորդական փաստաթուղթ՝ այդ մասին տեղյակ պահելով հյուրընկալ պետության Կառավարության համապատասխան մարմիններին:

### Հոդված 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի այն քաղաքացիները, որոնք ունեն դիվանագիտական կամ պաշտոնական անձնագրեր, պետք է հետևեն մյուս Պայմանավորվող կողմի օրենքներին և կանոններին վերջինիս սահմանն անցնելու և նրա տարածքում գտնվելու ողջ ընթացքում:

### Հոդված 5

1. Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ Պայմանավորվող կողմերը Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ դիվանագիտական ուղիներով պետք է փոխանակեն իրենց համապատասխան գործող անձնագրերի նմուշ-օրինակները, ներառյալ այդ փաստաթղթերի մանրամասն նկարագրությունը:

2. Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց պետք է փոխանցեն նաև իրենց նոր կամ փոփոխված անձնագրերի նմուշ-օրինակները, դրանք զուգակցելով նշված փաստաթղթերի մանրամասն նկարագրություններով, սույն Համաձայնագրի գործողության մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

## Հոդված 6

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, ելնելով պետական անվտանգության, հասարակական կարգի, հասարակության առողջության պահպանման կամ այլ լուրջ պատճառներից, իրեն իրավունք է վերապահում ժամանակավորապես լիովին կամ մասամբ կասեցնելու սույն Համաձայնագրի կատարումը՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող կողմին 30 (երեսուն) օր առաջ տեղեկացնելով:

## Հոդված 7

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ: Փոփոխությունները և լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

## Հոդված 8

Համաձայնագրի դրույթների իրագործման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն Պայմանավորվող կողմերի միջև պետք է լուծվի խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով՝ առանց որևէ երրորդ կողմի կամ միջազգային դատարանի միջամտության:

## Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ներքին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ հինգ տարիների համար, եթե Պայմանավորվող կողմերից մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր չհայտնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրողները, լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Դամասկոսում 2009 թվականի փետրվարի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. նոյեմբերի 11-ին